ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 536-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑՈՐԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի 28.12.2022 թվականի զեկուցագիրը և Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի բնակիչների՝ Սյունիքի մարզպետին ուղղված դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի՝ Սյունիքի մարզպետին դիմած բնակիչների կարիքների համար որպես թռչնակեր ցորեն ձեռք բերելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի վճարումը Կամո Հարությունյանին՝ ցորեն ձեռք բերելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին՝ ցորենը քաղաքացիներին հանձնելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

28.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
2022թ. դեկտեմբերի 28
ք. Կապան

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ